



## «ԵՎՐՈՊԱՑԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐ» ՄԱՏԵՆԱՇԱՐԻ 5-ՐԴ ՀԱՏՈՐԸ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱՆԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆԻ «ՖՐԵԴԵՐԻԿ ՖԵՅԴԻՆ ՀԱՅԱԳԵՏ», ԵՐԵՎԱՆ, ԵՐԵ-  
ՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ, 2008, 262 էջ:

Սույն աշխատությունը գրված է 20-րդ դարի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդիի ծննդյան 100-ամյակի առթիվ և նվիրված է նրա գիտական ժառանգության լուսաբանմանը: Գիրքը լույս է ընծայել ԵՊՀ հրատարակչությունը Գալուստ Գուլբենկյան հիմնադրամի ծախսերով, խմբագիրն է Վարդան Դևրիկյանը:

Անլիտա Դոլուխանյանի հերթական երկասիրությունը գալիս է շարունակելու ֆրանսիացի հայագետներին նվիրված ուսումնասիրությունների շարքը, ինչը հայրենանվեր կարևոր նախաձեռնություն է: Այն բաղկացած է **նախաբանից**, որտեղ տրված են Ֆեյդիի կյանքի կարևոր մանրամասները, **չորս գլուխներից**, **վերջաբանից** և ընդարձակ **հավելվածից**, ուր ներկայացված են գիտնականի՝ հայագիտության տարբեր հարցերի շուրջ մի քանի աշխատություններն ու առաջաբանները (դրանց թարգմանիչը ևս Ա. Դոլուխանյանն է):

Ուսումնասիրության հեղինակն սկզբում շարադրում է Ֆրեդերիկո Ֆեյդիի կենսագրությունը: Նա ծնվել է Փարիզում 1908 թ. ապրիլի 15-ին: Սովորել է Վերսալում Գրանդսեյն դը Հոթեռվի մոտ: Հետևելով իր ուսուցչի՝ հին լեզուների ուսումնասիրության մեթոդին՝ նա ևս որոշում է դառնալ լեզվաբան, ոգևորվում է նաև իր հայրենակից Շամպոլիոնի օրինակով՝ երազելով գտնել նոր Ռոգեթյան քար և հիերոգլիֆային տեքստեր: Նախախնամությունը, սակայն, Ֆեյդիին կապում է ոչ թե Եգիպտոսի ու Եգիպտագիտության, այլ Հայաստանի և հայ ժողովրդի հետ: Սկսում է իր հայ հարևանների լեզուն սովորել և ծանոթանալ Դեմիրճիբաշյանի «Հայ-ֆրանսերեն բառարանին» և քերականագիտական որոշ գիտելիքներ ձեռք բերում հայոց լեզվից:

1931 թ. դասավանդում է Սևրի հայկական վարժարանում: Հաճախում է նաև երկու խոշոր հայագետ-արևելագետների՝ Ֆրեդերիկ Մակլերի և Անտուան Մեյեի դասերին:

1933 թ. Ֆեյդին ստանում է Արևելյան լեզուների դպրոցի վկայագիրը և մեկնում Վենետիկ՝ աշխատելու Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում: Առանձնապես ծանրա-

բեռնված չլինելով դասերով՝ նա իր ժամանակի մի մասը տրամադրում է իտալերենի ուսումնասիրությանը՝ շարունակելով խորացնել և հայերենը: Այդ տարիներին նա ընդօրինակում է Ս. Ղազար կղզու 24 հմայիլները (տեքստերը): Մակայն Հայր Աթանաս Տիրոջանի հորդորով սկսում է գրել արևմտահայերենի քերականության վերաբերյալ մի ուսումնասիրություն՝ դրա համար 1933 թ. ստանալով Ս. Ղազարի միաբանության պատվավոր անդամի տիտղոս: 1937 թ. հունվարին Ֆեյդին ամուսնանում է հայուհի Հերմինե Ֆեսլիկենյանի հետ, և նրանք ունենում են մի որդի՝ Ժակ անունով: Այդ նույն թվականին, խուսափելով Մուսուլինիի իշխանության մեծացող սպառնալիքից, ընտանիքով վերադառնում է Փարիզ: Այստեղ նա մտերմանում է հայ համայնքի նշանավոր դեմքերի հետ, որոնցից առավել հայտնին Արշակ Չոպանյանն էր: 1938 թ. վերջինիս ջանքերով կազմակերպվում է գիտաժողով, և Ֆեյդին հանդես է գալիս Հեթում պատմիչի մասին մի ուշագրավ գեղուցումով: Արևելյան լեզուների դպրոցի հայոց լեզվի ամբիոնի վարիչ Ֆրեդերիկ Մակլերը նրան կատակով Ֆրեդերիկ Երկրորդ էր անվանում (իրենից հետո 2-րդը): Երբ նա 1937 թ. հեռանում է ամբիոնից և մի տարի անց մահանում, ամբիոնի վարիչ է դառնում Ժորժ Դյումեզիլը, որը ևս հայագետ էր (ամբիոնը դեկավարել է մինչև 1949 թ.): 1948 թ. Ֆեյդին գրում է արևմտահայերեն լեզվի դասագիրք և մինչ այդ՝ 1944-ից, նա Լեզվաբանների Միության և Ասիական Միության անդամ էր:

1949-77 թթ. Ֆեյդին դառնում է Արևելյան լեզուների ամբիոնի վարիչ: 1970-82 թթ. միաժամանակ նա տնօրենն էր Սևրի Սամուել-Մուրադյան վարժարանի:

1963 թ. առաջին անգամ այցելում է Խորհրդային Միություն (Հայաստան): Նրա վրա խոր տպավորություն են գործում վերածնված ժողովուրդը և իր երկիրը:

Ժան Պիեռ-Մահեն Ֆեյդիի ժառանգության մասին ասում է, թե նա ստեղծել է վեց գրքեր և 40-ից ավելի արժեքավոր հոդվածներ: Դրանք առավելապես ունեն տեսական բնույթ, թեև գուրկ չեն գործնական-կիրառական նշանակությունից ևս: Հայագետ Լ. Խաչերյանը Ֆեյդիի ուսումնասիրությունները բաժանում է 4 խմբի.

1. Պատմագիտական
2. Լեզվաբանական
3. Գրականագիտական հետազոտություններ
4. Բանահյուսության մասին ուսումնասիրություններ և թարգմանություններ

Հայագիտության բնագավառում Ֆեյդիին հետաքրքրել են բազմաթիվ խնդիրներ՝ սկսած 5-րդ դ. գրերի գյուտից, ընդհանուր և հայոց պատմության հիմնահարցերից և ավարտած արևմտահայ երգիծաբանների՝ Հ. Պարոնյանի և Ե. Օտյանի, ինչպես և Դ. Վարուժանի բանաստեղծության կարևորագույն խնդիրները՝ գուգադրված 1915-ի մասին իր հույժ արդիական կարծիքներով:

Ա. Դոլուխանյանի սույն ուսումնասիրությունում ուշադրություն է դարձվել Ֆեյդիի առավել կարևոր մի քանի աշխատանքների քննությանը: Ներկայացվել են հայագետի գիտական ժառանգության հատկապես նշանակալից ուղղությունները, մեզ համար առանձնապես ուշագրավ երկերը:

Սկզբում քննվում է «Մասունցի Դավիթ» էպոսի ֆրանսերեն հրատարակության հարցը, որին թարգմանիչ Ֆեյդին կցել է ակադեմիկոս Հ. Օրբելու 1939 թ. առաջաբանը՝ լրացնելով այն սեփական ուշագրավ առաջաբանով: Ֆրանսերեն թարգմանությունն իրագործվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ԽՍՀՄ ազգերի հանձնախմբի փոխապամանավորվածության արդյունքում: Ֆեյդին այն կարծիքին է, որ էպոսի թարգմանությունը չպետք է շփոթեցնի ընթերցողին այն իմաստով, թե հայ ժողովուրդն այլ ստեղծագործություն ներկայացնել չէր կարող, և այդ պատճառով ընտրվել է բանահյուսական նյութ, ինչպես դա արվել է որոշ կովկասյան ժողովուրդների գրականությունը ներկայացնելիս: Դոլուխանյանը գրում է. «Ֆ. Ֆեյդին փոքրիկ պատմական ակնարկով օտարազգի ընթերցողին տեղեկացնում է, թե ինչ ժողովուրդ է ստեղծել այդ հոյակապ գրական հուշարձանը» (էջ 16): Մինչև քրիստոնեության սկզբնավորումը՝ 2-րդ դ. վերջը, հայերն ունեցել են իրենց առասպելների և վիպերգերի ցիկլերը, որոնք, ի վերջո, ավարտվել են «Պարսից պատերազմ» վեպի՝ հայ առաջին էպիկական մեծածավալ երկի ստեղծումով, որի առաջին ուսումնասիրողը Մ. Աբեղյանն է:

Գիտնականը խիստ կարևորում է Ֆեյդիի՝ հայկական էպոսի բառային ստուգաբանությունները, հասկացությունների նորովի մեկնաբանությունը և ծեսերի դիպուկ ու համակողմանի արժևորումը: Ողորմիսները յուրատեսակ ռեքվիեմ են, նախնիների հիշատակի ոգեկոչման ինքնատիպ ձևեր: Ծովինարի լույս արձակելը, Կաթնով աղբյուրի խորհուրդը, ջրածին երկվորյակների ծնունդը, նրանց պայքարը ինքնահաստատման համար տրվում են այնպիսի նուրբ ընկալումներով, որ բնավ չի զգացվում հայագետի օտարազգի լինելը: Նա այնքան է խորացել պատումների գրառման, ինչպես և բարբառային-լեզվական յուրահատկությունների ուսումնասիրության մեջ, որ ցուցաբերում է միանգամայն նոր ընկալումներ: «Էպոսին տված հայագետի գնահատականներն իրենց հետազոտական մանրամասներով, գիտական մեկնաբանություններով ու եզրակացություններով արդիական են», - գրում է Ա. Դոլուխանյանը:

Կարևոր մի աշխատություն է «Հայաստանի քրիստոնեական հմայիլներ»-ը ուսումնասիրությունը: Թեև աշխատանքները գրքի վրա Ֆեյդին սկսել էր 1935 թ. և վերսկսել Երկրորդ աշխարհամարտից հետո՝ ուսումնասիրելով նաև Փարիզի ազգային թանգարանի հայկական հմայիլները, որոնք նոր ու կարևոր նյութ էին ավելացնում եղածին, բայց այդ ժամանակ էլ աշխատանքներն ընդհատվում են «Մասունցի Դավիթ» էպոսի թարգմանության պատճառով: 1986 թ.՝ ուսումնասիրության սկզբից 50 տարի անց միայն, ավարտվում է Ֆեյդիի այս ուշագրավ երկը: Ըստ Ա. Դոլուխանյանի՝ Ֆեյդին կարևորում է հմայիլների բնագրերը, տեսակները, արտագրության վայրերը, որոնք անհրաժեշտ են նյութի ձեռագրական-աղբյուրագիտական հիմքն ապահովելու համար: Որքան էլ տարօրինակ, հմայիլները հիմնականում ունեն գործնական-կիրառական նշանակություն, քանզի դրանց պատվիրատուները ցանկանում են հիվանդություններից, ձախողանքներից, չար աչքից և այլ նախապաշարումներից պաշտպանվել: Հ. Մանդակունին ժամանակին մերժում էր բժժանքն ու կախարդությունը, որով մարդիկ ապավինում են չար ուժերին: Հմայական բանաձևերը, սակայն, անկախ մեծ վարդապետների մտավախություններից, թափանցել են քրիստոնեական գրակա-

նությունն ևս: Այս դեպքում էլ մարդիկ փորձում են պաշտպանվել չար աղետներից, ատամնացավից, աչքացավից, որդեծնության դժվարություններից և ստերջությունից, երբ որպես օգնական հանդես են գալիս առաքյալները, սրբերը, Ս. Կույսը: Մեփական ցանկությունը հայտնելուց կամ գրելուց հետո երկու ձևով է տրվում աղոթքի հմայիլային բանաձևը.

ա) «Օգնական եւ պահապան եղիցի ծառայիս Աստուծոյ...Ամէն».

բ) «Բժշկութիւն եղիցի ի Յիսուս Քրիստոսէ ծառայիս Աստուծոյ....Ամէն»:

Ֆեյդին նկատում է, որ Գ. Նարեկացու և Ն. Շնորհալու աղոթքների զգալի մասը մուտք են գործել հմայիլների մեջ: Օրինակ Վենետիկի թ. 3021 ձեռագիրն ուշագրավ է նրանով, որ նրանում բոլոր հմայություններն ու աղոթքները վտանգների դեմ քրիստոնեական սկզբունքներով են հորինված: Ուստի Ա. Դոլուխանյանը եզրակացնում է, որ Ֆեյդին «ի մի է բերել հայկական հմայիլների ձեռագրական հրատարակության մի մասը, կազմել նրանց՝ մանրամասն հարուստ ցուցակը և ապա գիտականորեն դասակարգել ու գնահատել դրանք» (էջ 74):

Քննության է ենթարկված նաև Ֆեյդիի «Հայոց լեզվի դասագիրքը» աշխատությունը, Փարիզ, 1969: Մոտ 400 էջանոց այս գրքի 2-րդ լրամշակված հրատարակությունը հայագետը մեծահոգաբար նվիրել է Երևանի հիմնադրման 2750-ամյակին: Նրանում տրված դասերը, ըստ Դոլուխանյանի, նախապես արդեն անցել էին փորձաքննության երկարատև մի շրջան, որով ուսուցման ընտրված այդ մեթոդն արդարացրել էր իրեն: Գրքում անդրադարձ է կատարվել հայոց լեզվի նախագրային շրջանին՝ ցույց տալու, որ այն հնդեվրոպական լեզու է, թեև բազմապիսի ազդեցություններ է կրել հարևան ժողովուրդներից: Արդի հայերենն ունի երկու ճյուղ՝ արևելահայերեն և արևմտահայերեն: Դրանք հայերենի հարստության վկայությունն են: Ֆեյդին 5-րդ դարի հայերենը համարում է մշակված լեզու: Գրքի գյուտը մշակության մեծ թոփք եղավ: Հետագայում նույնպիսի նշանակություն ունեցավ տպագրության կազմակերպումը Վենետիկում 1512 թ. և Մխիթարյան միաբանության հիմնումն այդ քաղաքում 18-րդ դ. սկզբում: Դրանք եկան ընդլայնելու և հարստացնելու հայոց մշակության կյանքը:

Ուսուցումը Ֆեյդին զուգադրում է պատմական կարևոր փաստերի համադրման հետ: Հայաստանը ներկայացվում է իր պատմական տարածքի մեջ՝ աշխարհագրական իր բարդ դիրքով, դրա արդյունքում ծագած դժվարություններով: Հայերը թեև բազմաքանակ չեն, բայց Ասիայում կարևոր դեր են կատարել: Հայ-ֆրանսիական կապերը պայմանավորված են եղել խաչակիրների՝ դեպի արևելք կատարած արշավանքներով և երկուստեք ունեցած շահերով: Կիլիկյան իշխաններն աջակցում էին նրանց՝ դրա մեջ տեսնելով քրիստոնեության ընդլայնման հեռանկար: Գրքում տրվում են նաև հայերի սովորությունների նկարագրություններ: Ըստ Ֆեյդիի՝ 20-րդ դարում էլ հայ գյուղացին պահպանել է իր նահապետական կենցաղի լավագույն գծերը: Երբ Մենաարի դաշտավայրում կառուցված աշտարակի պատճառով լեզուները խառնվեցին, և Բաբելոնից Հայկ նահապետը հեռացավ, հիմնված երկիրը նրա անունով կոչվեց Հայք: Աշտարակը կառուցվել էր նոր ջրհեղեղից պաշտպանվելու համար, սակայն պատճառ դարձավ նոր աղետի՝ լեզուների բաժանմանը և ազգերի առաջաց-

մանը: Հետևելով հայ պատմիչների և նշանավոր պատմաբանների տեսակետներին՝ նա հասնում է հայ գրականության և պատմության մի նոր ընկալման: Ա. Դոլուխանյանը նշում է, որ անիական և կիլիկյան շրջանի մշակութային ձեռքբերումներն առանձնապես մեծ են ըստ ֆրանսիացի հայագետի: Դրա պատճառը հավանաբար խաչակիրների հետ կապված ժամանակաշրջանն ավելի լավ պատկերացնելով է պատճառաբանված: Նա բարձր է գնահատում այս դարի Հայաստանի երկու պետական միավորների նաև ռազմական հզորությունը:

Ֆեյդին մեծ նվաճում է համարում և մաշտոցյան գրերի գյուտը: Այդ մասին նա խոսում է՝ հատկապես Հայաստանի նշանավոր հայագետների կարծիքները նկատի ունենալով և իր եզրակացությունները բխեցնում է նրանց տեսակետների հաշվառումով: Չի համաձայնում Ա. Գ. Աբրահամյանի այն տեսակետի հետ, թե նախամաշտոցյան շրջանում գոյություն է ունեցել հայերեն գիր, թեև դա ևս ապացուցելի չէ, երբ մեզանում գոնե սեպագրի մասին կարելի է խոսել առանց որևէ տարակուսանքի: Ֆեյդիի կարծիքով հայկական գիրն սկսվում է Մ. Մաշտոցով՝ 405 թ.: Նա որոշ հայերեն գրեր բխեցնում է հունարենի որոշ գրանշաններից և բերում է համապատասխան օրինակներ: «Հայաստանի ակադեմիական միտքը հիմնականում համընկնում է ֆեյդիի կարծիքի հետ, որոնք վերաբերում են նախամաշտոցյան հայ գրերի խնդիրներին», - գրում է Ա. Դոլուխանյանը:

Այնուհետև ներկայացվում են Ֆեյդիի հայագիտական հետազոտությունների մի քանի ուղղությունները: Թերևս ամենակարևոր հարցերից մեկը Հեթում պատմիչի՝ Եվրոպայում վաղուց հայտնի և սիրված «Ծաղիկ պատմութեանց արևելեան աշխարհի» երկի գնահատումն է, որը հայտնի է նաև «Թաթարաց պատմութիւն» վերնագրով (Փարիզ, 1939): Հեթումը Կիլիկյան 2-րդ արքայական ընտանիքից է (ծննդյան և մահվան թվականներն անհայտ են): Սպարապետ է եղել 1294-1305 թթ.: 1305 թ. հրաժարվել է զինվորական իր պաշտոնից՝ հոգուտ իր որդի Օշինի, ընդունել կաթոլիկություն և մեկնել Կիպրոս՝ զբաղվելու քարոզչությամբ: 1307 թ. Կոնստանդնուպոլսի 5-րդ Պապի հանձնարարությամբ գրել է թաթարների պատմությունը ֆրանսերեն լեզվով, թեև ենթադրվում է, թե նախապես գոյություն է ունեցել և դրա հայերեն տեքստը (Գ. Աբգարյան): 1842 թ. Մ. Ավգերյանն այն թարգմանել է գրաբար՝ կցելով նաև Հեթումի Ժամանակագրությանը: Կոռնիկոսի իշխան Հեթումին Եվրոպայում գիտեին Ֆղեղ (եղբայր) Այատոն անունով: Նա մեկնում է Պուատյե ֆրանսիական քաղաքը, ուր Նիկոլա Ֆալկոն անունով մի վանականի պատմում է իր Պատմությունը, որը վերջինս թարգմանում է լատիներենի: Այն գրվեց 1307 թ., երբ արդեն կար նախորդ ֆրանսերեն տեքստը, թերևս նաև հայերենը: Հենց այդ երկրորդ օրինակն է արագ տարածվել ու շատ սիրվել եվրոպացիների կողմից: Փարիզի թանգարանում պահվում են Հեթումի պատմության յոթ ֆրանսերեն և երկու լատիներեն ձեռագրերը: Իր Պատմությամբ և գործունեությամբ Հեթումը ցանկանում էր նպաստել, որ Խաչակրաց նոր արշավանք կատարվի դեպի Մ. քաղաք: Հեթումի Պատմությունը ներկայացնում է նաև ուշագրավ լեզենդներ, որոնք հարստացնում են մեր պատկերացումները մոնղոլների մասին: Հր. Աճառյանն էլ իր հերթին նրան ներկայացնում է իբրև կիլիկյան արքայազն, որ Ղազան խանին է

հանձնում իր քրոջ ձեռքը և թաթարներին համոզում դառնալ քրիստոնյա: Քույրը մնում է իր հավատքին, մի որդի ունենում և մեղադրվում ամուսնական անհավատարմության մեջ: Սակայն երեխայի օծումից հետո ամեն ինչ կարգավորվում է: Սա շատ է հիշեցնում Էպոսի հերոսուհու՝ Ծովինարի մասին պատմող 1-ին ճյուղի դեպքերը:

Արդեն կաթոլիկություն ընդունած Հեթումը ներկայացնում է Ս. քաղաքը գրավելու իր ծրագիրը: Նա առաջարկում է հազար հեծելագորային և երեք հազար հետևակայիններ ուղարկել Կիպրոս, որպեսզի այնտեղից նախապատրաստվի Հալեպի գրավումը: Լիբանանի քառասուն հազար քրիստոնյաները կաջակցեն խաչակիրներին, և գործերն առաջ կընթանան: Նշվում է և անցնելիք ճանապարհը: Նա նաև համոզում է, թե հարմար ժամանակը հասել է, և պետք չէ հապաղել, քանի դեռ թաթարները չեն հասցրել իսլամն ընդունել: «Ֆեյդին այս խիստ զգուշացման մեջ,- գրում է Ա. Դոլուխանյան,- տեսնում է քաղաքական մեծ հեռատեսություն, որը, ցավոք, չընկալվեց Եվրոպայի կառավարող ուժերի կողմից, որի հետևանքով թաթարները քրիստոնյա դառնալու փոխարեն ընդունեցին մահմեդականությունը» (էջ 116):

Հեթումը Եվրոպայում ճանաչված առաջին հայ պատմիչն է: Նա իսկապես մեծ ընդունելության արժանացած հեղինակ է: Կան կարծիքներ և այն մասին, թե Հեթումը ոչ թե Կոռնկոսի տերն է, այլ արքայական ընտանիքի անդամներից մեկը: Հայրենասեր պատմիչը բարձր է գնահատում հայերի քրիստոնեական ձեռքբերումները: Բոլոր դեպքերում, նա տաղանդավոր պատմիչ, խելացի դիվանագետ և մեծ քրիստոնյա է:

Ինչ վերաբերում է սույն գրքին և հայ մշակույթի գնահատումներում Ֆ. Ֆեյդիի կատարած վիթխարի դերակատարությանը, ապա դույզն-ինչ կասկած չկա, որ նա մեծ գիտնական է: Նրա կատարածն արժանի է նորանոր ուսումնասիրությունների ու ճանաչման: Ավելին՝ հարկ է, որ յուրաքանչյուր հայագետ այսուհետև իր ուսումնասիրությունները գրելիս շրջանառի նաև Ֆեյդիի իսկապես արժեքավոր հայագիտական ժառանգությունը: Նրա գործադրած ազնիվ ջանքերը հայ իրականության մեջ շատ բարձր են գնահատվել և այսուհետև կգնահատվեն: Ա. Դոլուխանյանի կարծիքով այս հայագետի գործը հետաքրքիր է ու բազմապլան: Համոզված ենք, որ դեռ շատ հետազոտողներ կանդրադառնան Ֆ. Ֆեյդիի կյանքի ու գործի քննությանը:

**ՍԱԼԳԻՍ ՄԽԻԹԱԼՅԱՆ**

*Բանասիրական գիտությունների թեկնածու*